Արձանագրություն N 3

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ավտոճանապարհների միջին նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով թիվ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/5Շ ծածկագրով ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

«25» «մայիս» 2021թ.
ժամը՝ 11:00

ք. Երևան

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) — Դ. Արղամանյան

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Ա. Վարդանյան
2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Ս. Պետրոսյան
3.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) — Հ. Ավետիսյան
4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Ա. Բաբուջյան
5.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) — Լ. Զաքարյան
6.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) — Ի. Օսիպյան

1. ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/5Շ ծածկագրով մրցույթի հայտերի բացումը, օրը և ժամը

1.1 **ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/5Շ** ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2021 թվականի մայիսի 21-ին, ժամը 16:00-ին:**

1.2 Ներկայացված աշխատանքների նախահաշվային գինը՝

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	Չափաբաժնի նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Մ-3, Թուրքիայի հանրապետության սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ141+000 - կմ154+000 հատվածի միջին նորոգման աշխատանքներ	807,343,135

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և էլեկտրոնային հասցեների հրապարակում

2.1 Հայտեր ներկայացվել են հետևյալ մասնակիցների կողմից.

N	Մասնակիցների անվանումները	
1	Ճանապարհ ՍՊԸ	road@road.am
2	Արարատ-Ճանշին ՍՊԸ	araratchanshin@mail.ru
3	ԱԱԲ ՊՐՈԵԿՏ ՍՊԸ	babavetisyan@gmail.com
4	ԼԻԼԻԹ-87 ՍՊԸ	lilit87_95@rambler.ru
5	Սիսիանի ԲՈՒԱՏ ՍՊԸ	sisianstoun@mail.ru
6	Ռ. Ղազարյան ՍՊԸ	lorichshsh@mail.ru
7	Շինպլյուս ՍՊԸ	shinplyus@mail.ru
8	Սուարդի ԲԸ	suardi.branch@suardispa.am

3. Հայտերը էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

3.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

4. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

4.1 Հանձնաձողովն արձանագրեց, որ՝

1. **ԱԱԲ Պրոեկտ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունները՝**
   - Լրացված ծավալաթերթ-նախահաշվում VI.Իջատեղեր և մուտքեր բաժնի ընդհանուր արժեքը ներկայացված է 17,355.20 ՀՀ դրամ, բայց քանակի և միավորի արժեքի արտադյալը ստացվում է 17,351.655 ՀՀ դրամ:
2. **Սուարդի ԲԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները՝**
   - Լրացված և հաստատված ծավալաթերթ-նախահաշվի I.Երթևեկելի մաս, II. Փոսային նորոգում h=3-5սմ, III. Փոսային նորոգում հիմքով, IV.Կողային առուներ, V. Կողնակներ, VII.Անվտանգության էլեմենտներ բաժինների ընդհանուր արժեքը ներկայացվել է խախտելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետը 3-րդ ենթակետի Ա դրույթը, այն է՝ հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից:
   - Հայտին կցված չէր լիազորագրում նշված անձնագրերի պատճենները:

4.2 **Ռ. Ղազարյան ՍՊԸ -ի** կողմից ներկայացված գնային առաջարկում /Հավելված 2/ գնման ձև է նշված Գնանշման հարցում, սակայն ընթացակարգի գնման ձև է հրատապ բաց մրցույթը:

5. Հանձնաժողովը որոշեց՝

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ ընթացակարգը կասեցնել և առաջարկել մասնակիցներին, ում հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ ծանուցումը ստանալու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

5.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետը 2-րդ ենթակետը մերժել **Ռ. Ղազարյան ՍՊԸ -ի** կողմից ներկայացված հայտը:

6. ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/5Շ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից արձանագրված անհամապատասխանություն շտկման վերաբերյալ տեղեկություններ

6.1 Մասնակիցների կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

7. Տվյալներ մասնակիցների կողմից առաջարկված գների վերաբերյալ

Մ-3, Թուրքիայի հանրապետության սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ141+000 - կմ154+000 հատվածի միջին նորոգման աշխատանքներ				
Հ/Հ	Մասնակից	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր Գին
1	Ճանապարհ ՍՊԸ	648,950,490	129,790,098	778,740,588
2	Արարատ-Ճանշին ՍՊԸ	659,395,000	131,879,000	791,274,000

3	Ռ. Ղազարյան ՍՊԸ	662,504,659	132,500,932	795,005,591
4	ԱԱԲ ՊՐՈԵԿՏ ՍՊԸ	669,625,000	133,925,000	803,550,000
5	ԼԻԼԻԹ-87 ՍՊԸ	685,000,000	137,000,000	822,000,000
6	Սիսիանի ԲՈՒԱՏ ՍՊԸ	791,421,585	158,284,317	949,705,902
7	Շինպյուս ՍՊԸ	916,666,666.67	183,333,333.33	1,100,000,000.00
8	Սուարդի ԲԸ	934,010,194.00	186,802,038.80	1,120,812,232.80

8. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների, պատասխանների և հրավերում կատարված փոփոխությունների մասին

8.1 Հրավերի վերաբերյալ մայիսի 10-ին կատարվել է հարցում և դրանց վերաբերյալ 2021 թվականի մայիսի 12-ին տրամադրվել է պարզաբանում:

Հարցադրում N 1.

Հայտնում ենք Ձեզ, որ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/5Շ ծածկագրով հայտարարված մրցույթով ներկայացված ծավալները և գոյություն ունեցող ճանապարհահատվածի վիճակի գնահատումը համարժեք չեն:

- Գոյություն ունեցող ճանապարհի կողնակների վերանորոգման համար բուսահողի հեռացումը նախատեսված չէ, իսկ կողնակների ամրացման ծավալը բնահողի հեռացումից հետո մի քանի անգամ մեծանալու է /տես նկարներ/,
- Հաշվի չի առնված բնակավայրում ջրահեռացման վաքերի մաքրման ծավալները,
- Կողային առուներում առկա են թփուտներ և ծառեր, որոնք պետք է հաշվի առնել մաքրման ծավալների մեջ,
- Բնակավայրում բացակայում է մայթերի վերականգնման աշխատանքները, հետիոտնի անվտանգությունը կազմկաերպելու համար,
- Վերը նշվածը հաշվի առնելով ի՞նչ անհրաժեշտություն կա թանկարժեք նշագծում իրականացնելու,
- Հաշվի առնված չէ Գարգար բնակավայրի կամրջային անցման վերականգնումը:

Պարզաբանում N 1.

Հայտնում ենք Ձեզ,որ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/5Շ ծածկագրով ներկայացված Մ-3, Թուրքիայի Հանրապետության սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ141+000 - կմ154+000 հատվածի միջին նորոգման թերությունների ակտում ներառված ծավալների փաստացի գնահատումը անհրաժեշտ է կատարել ելնելով թերությունների ակտում ներառված ամփոփագրերից:

- Գոյություն ունեցող ա/ճ 56% նախատեսված է ֆռեզել և հետո նոր ծածկ իրականացնել, այդ հատվածներում կատարվում է կողնակների մասնակի լրացում ավազակոպճով անհրաժեշտության դեպքում, մնացած չֆռեզվող հատվածներում կողնակները նախատեսված է իրականացնել միջինը 5 սմ հաստությամբ և լայնությամբ մինչև բուսականությունը, այդ իսկ պատճառով բուսահողի հեռացման կարիք չկա:
- Ծավալաթերթ – նախահաշվում կողային առուների և վաքերի մաքրման ծավալները ներառված են մեկ տողով, քանի որ աշխատանքների բնույթը նույնն է: Վաքերի և առուների առանձնացված ծավալները ներառված են փոփոգում:
- Նշված աշխատանքները ենթակա են իրականացման միջին նորոգման աշխատանքների ավարտից հետո ճանապարհների սպասարման աշխատանքների շրջանակներում:
- Միջին նորոգման աշխատանքների շրջանակներում իրականացվում են ցածր ռիսկայնության աստիճանի դասակարգում ունեցող աշխատանքներ, որոնց մեջ մայթերի վերակառուցման աշխատանքներ ներառված չեն:

- Գծանշման ներկի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ տերմոպլաստով իրականացված գծանշումը երակարակյաց է, առավել արտահայտիչ է, ինչը նպաստում է երթևեկության անվտանգությանը: Տերմոպլաստով իրականացված գծանշման երաշխիքային ժամկետը 3 տարի է և տվյալ ժամանակահատվածում տվյալ տեղամասի համար գծանշման իրականացման աշխատանքներ չեն նախատեսվում: Նշենք, որ սովորական գծանշման ներկով իրականացված գծանշումն անհրաժեշտ է իրականացնել ամեն 6 ամիսը մեկ:
- ՀՀ 2021թ. պետական բյուջեով նախատեսված են Մ3 Թուրքիայի Հանրապետության սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր -Վրաստանի սահման 144+020 հատվածի վրա գտնվող կամրջի (Գարգառի կամուրջ) հիմնանորոգման աշխատանքներ:

8.2 Հրավերի փոփոխություն չի կատարվել:

9. Հանձնաժողովը որոշեց՝

9.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, և որ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա հանձնաժողովի նիստը կասեցնել, էլեկտրոնային ձևով ծանուցել բավարար գնահատված մասնակցին 31.05.2021թ. ժամը 10.30 հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Մասնակցում էին՝ հանձնաժողովի.

Հանձնաժողովի նախագահ
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) Դ. Արղամանյան

անդամներ՝

1.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) Ա. Վարդանյան

2.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) Ս. Պետրոսյան

3.Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) Հ. Ավետիսյան

4.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) Ա. Բաբուջյան

5.Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) Լ. Զաքարյան

6.Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) Ի. Օսիպյան